ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 նոյեմբերի 2015 թվականի N 1331-Ն

ԹԱՆԿԱՐԺԵՔ ՔԱՐԵՐԻ, ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻ, ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻ ՋԱՐԴՈՆԻ ԵՎ ԹԱՓՈՆԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԵՐՐՈՐԴ ԵՐԿՐՆԵՐ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ ԵՐՐՈՐԴ ԵՐԿՐՆԵՐԻՑ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱԿՏ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով 2014 թվականի մայիսի 29-ի «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 25-րդ հոդվածի և «Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրի 2-րդ հոդվածի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը *որոշում է.*

1. Հաստատել՝

1) թանկարժեք քարերի՝ Հայաստանի Հանրապետության տարածքից երրորդ երկրներ արտահանման և Հայաստանի Հանրապետության տարածք երրորդ երկրներից ներմուծման ժամանակ պետական վերահսկողության ակտ տրամադրելու կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) թանկարժեք քարերի՝ Հայաստանի Հանրապետության տարածքից երրորդ երկրներ արտահանման և Հայաստանի Հանրապետության տարածք երրորդ երկրներից ներմուծման պետական վերահսկողության ակտի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) թանկարժեք մետաղների՝ Հայաստանի Հանրապետության տարածքից երրորդ երկրներ արտահանման և Հայաստանի Հանրապետության տարածք երրորդ երկրներից ներմուծման ժամանակ պետական վերահսկողության ակտ տրամադրելու կարգը՝ համաձայն N 3 հավելվածի.

4) Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանվող թանկարժեք մետաղներ և թանկարժեք քարեր պարունակող ապրանքների պետական վերահսկողության և արժեքի գնահատման ակտի ձևը՝ համաձայն N 4 հավելվածի.

5) Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող թանկարժեք մետաղներ և թանկարժեք քարեր պարունակող ապրանքների պետական վերահսկողության և արժեքի գնահատման ակտի ձևը՝ համաձայն N 5 հավելվածի.

6) Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանվող թանկարժեք մետաղների պետական վերահսկողության և արժեքի գնահատման ակտի ձևը՝ համաձայն N 6 հավելվածի.

7) այն թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի, չմշակված մետաղների, թանկարժեք մետաղների ջարդոնի և թափոնների, թանկարժեք մետաղներից հանքաքարերի և խտանյութերի և թանկարժեք մետաղներ պարունակող հումքային ապրանքների ցանկը, որոնք Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխելիս ունեն սահմանափակումներ՝ համաձայն N 7 հավելվածի.

8) վերամշակման նպատակով Հայաստանի Հանրապետության տարածքից երրորդ երկրներ արտահանման և Հայաստանի Հանրապետության տարածք երրորդ երկրներից ներմուծման ժամանակ թանկարժեք մետաղների, թանկարժեք քարերի և թանկարժեք մետաղներ պարունակող հումքային ապրանքների վերամշակման ելքի նորմերը որոշելու կարգը՝ համաձայն N 8 հավելվածի.

9) մաքսային նպատակներով բնական ալմաստների և ադամանդների վերամշակման արտադրանքի ելքի նորմերի որոշման կարգը՝ համաձայն N 9 հավելվածի:

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետի 2-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ ենթակետերով սահմանված ակտերը տրամադրելու մասով լիազոր մարմին է ճանաչվում Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը (այսուհետ՝ լիազոր մարմին):

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Հ. Աբրահամյան**

2015 թ. նոյեմբերի 23
Երևան

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2015 թվականի
նոյեմբերի 5-ի N 1331-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԹԱՆԿԱՐԺԵՔ ՔԱՐԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԵՐՐՈՐԴ ԵՐԿՐՆԵՐ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ ԵՐՐՈՐԴ ԵՐԿՐՆԵՐԻՑ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱԿՏ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

1. Սույն կարգի նպատակը թանկարժեք քարերի՝ Հայաստանի Հանրապետության տարածքից երրորդ երկրներ արտահանման և Հայաստանի Հանրապետության տարածք երրորդ երկրներից ներմուծման ժամանակ պետական վերահսկողություն իրականացնելու հետ կապված հարաբերությունները կանոնակարգելն է:

2. Սույն կարգով սահմանված հարաբերությունները կարգավորվում են նաև Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի օգոստոսի 16-ի «Ոչ սակագնային կարգավորման ոլորտում նորմատիվ իրավական ակտերի մասին» N 134 որոշման դրույթներին համապատասխան:

3. Սույն կարգում օգտագործվող հասկացություն՝ պետական վերահսկողության ակտ՝ փաստաթուղթ, որը հաստատում է ներկայացված ապրանքի հանդեպ իրականացված պետական վերահսկողության արդյունքները:

4. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի նոյեմբերի 5-ի N 1331-Ն որոշման N 7 հավելվածում ընդգրկված՝ թանկարժեք քարերի՝ Հայաստանի Հանրապետության տարածքից երրորդ երկրներ արտահանման և Հայաստանի Հանրապետության տարածք երրորդ երկրներից ներմուծման ժամանակ լիազոր մարմնի կողմից տրամադրվում է պետական վերահսկողության ակտ:

5. Պետական վերահսկողության ակտ ստանալու համար իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը (այսուհետ՝ հայտատու) լիազոր մարմին է ներկայացնում՝

1) դիմում, որտեղ նշվում է հայտատուի անվանումը, պետական գրանցման կամ հաշվառման համարը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն.

2) արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ (ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ) դասակարգչի ծածկագրերին դասվող բնական՝ մշակված կամ չմշակված, բայց չշրջանակված կամ չամրացված ալմաստների առուվաճառքի, ներմուծման, արտահանման, փոխադրման լիցենզիայի պատճենը, եթե ներմուծումը կամ արտահանումն իրականացվում է նշված ծածկագրերով.

3) պայմանագիր և (կամ) հաշիվ ապրանքագրի պատճենները.

4) Քիմբերլի գործընթացի հավաստագրի պատճենը, եթե ներմուծումը կամ արտահանումն իրականացվում է 710210000, 710221000, 710231000 ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ ծածկագրերով.

5) սույն կարգով հաստատված N 1 ձևին և (կամ N 2 ձև և) կամ N 3 ձևին և (կամ N 4 ձև և) կամ N 5 ձևին համապատասխան տեղեկանքները:

6. Թանկարժեք քարերի՝ Հայաստանի Հանրապետության տարածքից երրորդ երկրներ արտահանման և Հայաստանի Հանրապետության տարածք երրորդ երկրներից ներմուծման ժամանակ պետական վերահսկողության ակտն ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը հայտատուի հայեցողությամբ լիազոր մարմին են ներկայացվում էլեկտրոնային եղանակով (էլեկտրոնային հասցե՝ secretariat@mineconmy.am), ինչպես նաև փոստով կամ առձեռն:

7. Հայտատուի ներկայացրած փաստաթղթերը լիազոր մարմնում մուտքագրվելուց և դրանք ամբողջական լինելու դեպքում, երեք աշխատանքային օրվա ընթացքում, թանկարժեք քարերի՝ Հայաստանի Հանրապետության տարածքից երրորդ երկրներ արտահանման և Հայաստանի Հանրապետության տարածք երրորդ երկրներից ներմուծման ժամանակ պետական վերահսկողության ակտն առձեռն տրվում կամ ուղեկցող գրությամբ (փոստով) ուղարկվում է հայտատուին:

8. Հայտատուի ներկայացրած փաստաթղթերը լիազոր մարմին ներկայացնելու օրվանից, թերի լինելու դեպքում, մեկ աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին էլեկտրոնային կամ կապի այլ միջոցներով տեղեկացվում է հայտատուին:

9. Հայտատուն փաստաթղթերը թերի լինելու վերաբերյալ տեղեկացում ստանալուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում կարող է համալրել դրանք:

10. Թանկարժեք քարերի՝ Հայաստանի Հանրապետության տարածքից երրորդ երկրներ արտահանման և Հայաստանի Հանրապետության տարածք երրորդ երկրներից ներմուծման ժամանակ պետական վերահսկողության ակտն ստանալու հայտը մերժվում է, եթե հայտը և կից ներկայացվող փաստաթղթերը թերի են և երկու աշխատանքային օրվա ընթացքում հայտատուն չի վերացնում հայտում կամ կից փաստաթղթերում առկա թերությունները կամ չի ներկայացնում համալրված փաստաթղթերը:

11. Լիազոր մարմնի կողմից պետական վերահսկողության ակտը կազմվում է երեք օրինակից՝ հայերենով, որից երկուսը տրամադրվում է հայտատուին: Հայտատուի ցանկությամբ պետական վերահսկողության ակտը կազմվում է նաև ռուսերենով:

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար

Դ. Հարությունյան

Հավ N 1

ՏԵՂԵԿԱՆՔ

չմշակված թանկարժեք քարերի օգտագործման մասին (արտահանման պայմանագրի N_____ առ_____)

NN ը/կ	Համարը, հումքային փաստաթղթերը տալու ամսաթիվը, վաճառող	Համարը, ակտը տալու համարը կոմպլեկտավորման ցուցակի	Չմշակված թանկարժեք քարեր՝ պայմանագրերով, հանձնման ակտերով, կոմպլեկտավորման ցուցակով		Չմշակված թանկարժեք քարեր, որոնք օգտագործվել են մշակված թանկարժեք քարերի պատրաստման համար՝ արտահանման նպատակով		Չմշակված թանկարժեք քարեր, որոնք օգտագործվել են մշակված թանկարժեք քարերի պատրաստման համար՝ ներքին շուկայում իրացման նպատակով		Չմշակված թանկարժեք քարեր՝ երկրորդային շուկայում իրացված		Չմշակված թանկարժեք քարեր՝ նախկինում ներկրված		Չմշակված թանկարժեք քարեր՝ արտահանման համար հայտարարագրված		Չմշակված թանկարժեք քարերի մնացորդ՝ արտադրությունում կամ պահեստում առկա	
			կշիռը (կարատ)	արժեքը (ԱՄՆ-ի դոլար)	կշիռը (կարատ)	արժեքը (ԱՄՆ-ի դոլար)	կշիռը (կարատ)	արժեքը (ԱՄՆ-ի դոլար)	կշիռը (կարատ)	արժեքը (ԱՄՆ-ի դոլար)	կշիռը (կարատ)	արժեքը (ԱՄՆ-ի դոլար)	կշիռը (կարատ)	արժեքը (ԱՄՆ-ի դոլար)	կշիռը (կարատ)	արժեքը (ԱՄՆ-ի դոլար)

Կազմակերպության ղեկավար _____
Գլխավոր հաշվապահ _____

Հավ N 2

ՏԵՂԵԿԱՆՔ

արտահանման (ներքին շուկայում իրացման) նպատակով թանկարժեք քարերի պատրաստման համար չմշակված թանկարժեք քարերի օգտագործման մասին (պայմանագիր N _____ առ _____)

NN ը/կ	Համարը և ամսաթիվը չմշակված թանկարժեք քարերի պայմանագրերի և տրամադրման ակտերի	Չմշակված թանկարժեք քարեր վաճառող	Չմշակված թանկարժեք քարեր՝ պայմանագրերով		Չմշակված թանկարժեք քարեր, որոնք համապատասխանում են արտահանվող թանկարժեք քարերին		Արտահանվող թանկարժեք քարեր			Պիտանի ելք %	Չմշակված թանկարժեք քարերի մնացորդ (արտադրություն և պահեստում)	
			կշիռը (կարատ)	արժեքը (ԱՄՆ-ի դոլար)	կշիռը (կարատ)	արժեքը(ԱՄՆ-ի դոլար)	կշիռը (կարատ)	արժեքը (ԱՄՆ-ի դոլար)			կշիռը (կարատ)	արժեքը (ԱՄՆ-ի դոլար)
								հաշ-վառ-ված	պայմանա-գրային			
1.Արտահանում												
Ներքին շուկա												
	Ընդամենը											

Կազմակերպության ղեկավար _____

Հավ N 3

ՏԵՂԵԿԱՆՔ

10.8 և ավելի կարատ ալմաստի հումքի օգտագործման մասին

NN ը/կ	Համարը և ամսաթիվը պայմանագրի, հանձնման ակտի, կոմպլեկտա-վորման ամփոփագրի	Ալմաստի հումքի բնութագիրը (գույն, դեֆեկտայնու-թյուն)	Ալմաստի հումքը պայմանագրով		Ալմաստի հումքը, որը համապատասխանում է ադամանդին		Ստացված ադամանդներ						
			բյուրեղի կշիռը (կարատ)	արժեքը (ԱՄՆ-ի դոլար)	բյուրեղի կշիռը (կարատ)	արժեքը (ԱՄՆ-ի դոլար)	քանակը (հատ)	երեսակ-ման ձևը	ալմաստի հումքի բնութագիրը (գույն, դեֆեկտայ-նություն, խումբ)	կշիռը (կարատ)	մեկ կարատի համար հաշվար-կային գինը (զեղչերով, հավելա-վճարով) (ԱՄՆ-ի դոլար)	արժեքը հաշվարկ-ված (զեղչերով, հավելա-վճարով) (ԱՄՆ-ի դոլար)	պայմա-նագրային արժեքը (ԱՄՆ-ի դոլար)
1	**2**	**3**	**4**	**5**	**4.1**	**5.1**	**6**	**7**	**8**	**9**	**10**	**11**	**12**
	Ընդամենը												
Ընդամենը													

- Անհրաժեշտ է ընդհանրացնել արդյունքը քանակով, կշռով և արժեքով (հաշվարկային և պայմանագրային) ադամանդների համար՝ 6 կարատից բարձր կշռով:
- Այն դեպքում, երբ օգտագործվել է բյուրեղների մի մասը, 4-րդ և 5-րդ սյունակներում նշվում են բյուրեղի նախնական կշիռը և արժեքը, 4.1-ին սյունակում՝ օգտագործված բյուրեղի կշիռը, նույն սյունակում աստղանիշով (*) նշվում է չօգտագործված բյուրեղի մասի կշիռը:
- Այն դեպքում, երբ բյուրեղի մի մասը մշակվել է ավելի վաղ, 4-րդ և 5-րդ սյունակներում նշվում է բյուրեղի սկզբնական կշիռը և արժեքը, 4.1-ին սյունակում (#)-ով նշվում է նախկինում օգտագործված մասի կշիռը և ընթացիկ առաքվող օգտագործված մասի ադամանդի կշիռը:
- Այն դեպքում, երբ հումքային պայմանագրով մնացորդներն օգտագործվել են տեխնիկական կարիքների համար, անհրաժեշտ է այն արտացոլել ՝ հղում կատարելով հումքի դուրսգրումը հաստատող փաստաթղթերին:
- 9-րդ սյունակը լրացնելիս թույլատրելի է միավորել միջին և փոքր չափի ստացված ադամանդները:

Կազմակերպության ղեկավար _____

Հավ N 4

ՏԵՂԵԿԱՆՔ

արտադրանքում արտադրատեխնիկական նպատակով թանկարժեք քարերի օգտագործման մասին (արտահանման պայմանագրի N____ առ_____)

NN ը/կ	Համարը, ամսաթիվը հումքի ձեռքբերման փաստաթղթերի, թանկարժեք քարեր վաճառողը	Թանկարժեք քարեր՝ պայմանագրերով, հանձնման ակտերով, կոմպլեկտավորման ամփոփագրերով		Թանկարժեք քարեր, որոնք օգտագործվել են արտադրա-տեխնիկական նշանակության արտադրանքում		Արտահանման համար հայտարարագրված արտադրա-տեխնիկական նշանակության արտադրանքը		Նախկինում օգտագործված թանկարժեք քարերը		Պահեստում կամ արտադրությունում մնացած թանկարժեք քարերի մնացորդը	
		կշիռը (կարատ)	արժեքը (ԱՄՆ-ի դոլար)	կշիռը (կարատ)	արժեքը (ԱՄՆ-ի դոլար)	կշիռը (կարատ)	արժեքը (ԱՄՆ-ի դոլար)	կշիռը (կարատ)	արժեքը(ԱՄՆ-ի դոլար)	կշիռը(կարատ)	արժեքը(ԱՄՆ-ի դոլար)

Կազմակերպության ղեկավար _____
Գլխավոր հաշվապահ _____

Աղ N 5

ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ N

առ « »_____ թ.

համաձայն N__ առ « »_____ թ. պայմանագրի կամ հաշիվ ապրանքագրի

NN ը/կ	Ապրանքի (թանկարժեք քարերի) անվանումը և նկարագիրը	Ապրանքի քաշային խումբը	Ապրանքի ծածկագիրը	Թանկարժեք քարերի ընդհանուր ծավալը և քանակը			Արժեքը՝ ըստ պայմանագրի կամ հաշիվ ապրանքագրի
				կարատ	հատ	գրամ	
1							
	Ընդամենը						

Տնօրեն _____
(իրավաբանական անձի կամ ԱՁ-ի անվանումը և անունը, ազգանունը)

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2015 թվականի
նոյեմբերի 5-ի N 1331-Ն որոշման

Ա Կ Տ

ԹԱՆԿԱՐԺԵՔ ՔԱՐԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԵՐՐՈՐԴ ԵՐԿՐՆԵՐ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ ԵՐՐՈՐԴ ԵՐԿՐՆԵՐԻՑ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ

N___/____

(պետական վերահսկողության անցկացման վայրը) «___» _____ _____ թ.

Արտահանողի (ներմուծողի) դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության կողմից իրականացվեց ---------- խմբաքանակի պետական վերահսկողություն՝ թանկարժեք մետաղների, թանկարժեք քարերի և թանկարժեք մետաղներ պարունակող հումքային ապրանքների Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծման և Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանման կարգին համապատասխան:

Գործարքի ռեկվիզիտներ՝
Սեփականատեր-կազմակերպության անվանումը _____
Արտահանող (ներմուծող) կազմակերպության անվանումը
_____

Արտահանողի (ներմուծողի) անվանումը _____
Բեռն ստացողի (բեռն առաքողի) անվանումը _____
Պայմանագիրը _____
Հատկորոշումը (դասակարգումը) _____
Հաշիվ ապրանքագիրը _____
Քիմբերլի գործընթացի հավաստագիրը _____
(չմշակված բնական ալմաստների ներմուծում)
Խմբաքանակի ընդհանուր զանգվածը _____
Խմբաքանակի արժեքը _____
Ապրանքի ծածկագիրն ըստ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ _____
Տեղերի քանակը _____
Ներմուծող (արտահանող) պետությունը _____
Թույլատրող փաստաթղթերը՝
լիցենզիա _____

ապրանքի վերամշակման թույլտվություն _____

Հսկողություն իրականացնելիս օգտագործվել են հետևյալ սարքերը և գործիքները՝
_____
_____

Պետական վերահսկողության արդյունքները և եզրակացությունները՝
_____
_____
_____

Պետական վերահսկողությունն իրականացվել է մաքսային հսկողության ընթացքում մինչև մաքսային հսկողությունը:
Պետական վերահսկողության ավարտից հետո բեռը փաթեթավորվել է _____ տեղ և կապարակնքվել է հետևյալ կնիքներով՝

Արտահանող (ներմուծող) կազմակերպության համարը _____

Մաքսային մարմնի պաշտոնակատար անձի համարը _____
Լիազոր մարմնի ներկայացուցչի համարը _____

Լիազոր մարմնի ներկայացուցիչներ՝ _____
_____ /_____/
_____ /_____/

Հաստատում եմ կազմակերպության կողմից պետական վերահսկողության ներկայացված փաստաթղթերի իսկությունը: Թանկարժեք իրերի հետ պետական փորձագետ-վերահսկիչների կողմից կատարված աշխատանքի հանդեպ պահանջ չունեմ: (Կազմակերպության լիազորագիրը ներկայացված է):

Արտահանող (ներմուծող) կազմակերպության ներկայացուցիչը _____

/_____/

Պետական վերահսկողության իրականացումը հաստատում եմ՝
_____
_____

Պետական վերահսկողության ներկայացուցիչը _____ /_____/

Բնական ալմաստների արտահանման հավաստագիր*

N _____ առ «___ » _____ թ.

Հավաստագիրը ձևակերպող լիազոր մարմնի ներկայացուցիչը

_____ /_____/

_____
* Բնական ալմաստների արտահանման ժամանակ

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար

Դ. Հարությունյան

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2015 թվականի
նոյեմբերի 5-ի N 1331-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԵՐՐՈՐԴ ԵՐԿՐՆԵՐ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ ԵՐՐՈՐԴ ԵՐԿՐՆԵՐԻՑ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱԿՏ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

1. Սույն կարգի նպատակը թանկարժեք մետաղների՝ Հայաստանի Հանրապետության տարածքից երրորդ երկրներ արտահանման և Հայաստանի Հանրապետության տարածք երրորդ երկրներից ներմուծման պետական վերահսկողություն իրականացնելու հետ կապված հարաբերությունները կանոնակարգելն է:

2. Սույն կարգով սահմանված հարաբերությունները կարգավորվում են նաև Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի օգոստոսի 16-ի «Ոչ սակագնային կարգավորման ոլորտում նորմատիվ իրավական ակտերի մասին» N 134 որոշման դրույթներին համապատասխան:

3. Սույն կարգում օգտագործվող հասկացություն՝ պետական վերահսկողության ակտ՝ փաստաթուղթ, որը հաստատում է ներկայացված ապրանքի հանդեպ իրականացված պետական վերահսկողության արդյունքները:

4. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի նոյեմբերի 5-ի N 1331-Ն որոշման N 7 հավելվածում ընդգրկված՝ նշված թանկարժեք մետաղների, ինչպես նաև թանկարժեք մետաղներ պարունակող ջարդոնի և թափոնի՝ Հայաստանի Հանրապետության տարածքից երրորդ երկրներ արտահանման և Հայաստանի Հանրապետության տարածք երրորդ երկրներից ներմուծման ժամանակ լիազոր մարմնի կողմից տրամադրվում է պետական վերահսկողության ակտ:

5. Պետական վերահսկողության ակտ ստանալու համար իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը (այսուհետ՝ հայտատու) լիազոր մարմին է ներկայացնում՝

1) դիմում, որտեղ նշվում է հայտատուի անվանումը, պետական գրանցման կամ հաշվառման համարը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն.

2) պայմանագիր և (կամ) հաշիվ ապրանքագրի պատճենները.

3) արտահանման դեպքում՝ թանկարժեք մետաղների, թանկարժեք քարերի, չմշակված թանկարժեք մետաղների, թանկարժեք մետաղների ջարդոնի և թափոնների, թանկարժեք մետաղներից հանքանյութերի և խտանյութերի և թանկարժեք մետաղներ

պարունակող հումքային ապրանքների՝ Հայաստանի Հանրապետության տարածքից երրորդ երկրներ արտահանման լիցենզիայի պատճենը.

4) դասակարգում՝ համաձայն սույն կարգի ձևի:

6. Թանկարժեք մետաղների՝ Հայաստանի Հանրապետության տարածքից երրորդ երկրներ արտահանման և Հայաստանի Հանրապետության տարածք երրորդ երկրներից ներմուծման պետական վերահսկողության ակտն ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը հայտատուի հայեցողությամբ լիազոր մարմին են ներկայացվում էլեկտրոնային եղանակով (էլեկտրոնային հասցե՝ secretariat@mineconomy.am), ինչպես նաև փոստով կամ առձեռն:

7. Հայտատուի ներկայացրած փաստաթղթերը լիազոր մարմնում մուտքագրվելուց և դրանք ամբողջական լինելու դեպքում, երեք աշխատանքային օրվա ընթացքում, թանկարժեք քարերի՝ Հայաստանի Հանրապետության տարածքից երրորդ երկրներ արտահանման և Հայաստանի Հանրապետության տարածք երրորդ երկրներից ներմուծման ժամանակ պետական վերահսկողության ակտն առձեռն տրվում կամ ուղեկցող գրությամբ (փոստով) ուղարկվում է հայտատուին:

8. Հայտատուի ներկայացրած փաստաթղթերը լիազոր մարմին ներկայացնելու օրվանից, թերի լինելու դեպքում, մեկ աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին էլեկտրոնային կամ կապի այլ միջոցներով տեղեկացվում է հայտատուին:

9. Հայտատուն փաստաթղթերը թերի լինելու վերաբերյալ տեղեկացում ստանալուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում կարող է համալրել դրանք:

10. Թանկարժեք մետաղների՝ Հայաստանի Հանրապետության տարածքից երրորդ երկրներ արտահանման և Հայաստանի Հանրապետության տարածք երրորդ երկրներից ներմուծման ժամանակ պետական վերահսկողության ակտն ստանալու հայտը մերժվում է, եթե հայտը և կից ներկայացվող փաստաթղթերը թերի են և երկու աշխատանքային օրվա ընթացքում հայտատուն չի վերացնում հայտում կամ կից փաստաթղթերում առկա թերությունները կամ չի ներկայացնում համալրված փաստաթղթերը:

11. Լիազոր մարմնի կողմից պետական վերահսկողության ակտը կազմվում է երեք օրինակից՝ հայերենով, որից երկուսը տրամադրվում է հայտատուին: Հայտատուի ցանկությամբ պետական վերահսկողության ակտը կազմվում է նաև ռուսերենով:

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար **Դ. Հարությունյան**

Ձև

ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ N

առ _____ 2015 թ.
համաձայն N_____ առ _____ 2105 թ. հաշիվ ապրանքագրի

NN	Ապրանքի	Ապրանքի	Ապրանքի	Թանկարժեք մետաղների	Թանկարժեք քարերի	Պայմանագրի

ը/կ	անվանումը(նկարագիրը)	ծածկագիրը	ընդհանուր ծավալը և քանակը									կամ հաշիվ ապրանքագրի արժեքը
			գրամ	հատ	զույգ	անվա-նումը	հարգը	ծավալը(գրամ)	անվա-նումը	կարատ	ծավալը(գրամ)	
1												
Ընդամենը												

Տնօրեն _____
(իրավաբանական անձի կամ ԱՁ-ի անվանումը և անունը, ազգանունը)

Հավելված N 4
ՀՀ կառավարության 2015 թվականի
նոյեմբերի 5-ի N 1331-Ն որոշման

Ա Կ Տ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԱՐՏԱՀԱՆՎՈՂ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐ ԵՎ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՔԱՐԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԺԵՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ

_____ _____ N _____
(ամսաթիվը) (պետական վերահսկողության իրականացման վայրը)

Թանկարժեք մետաղների, թանկարժեք քարերի և թանկարժեք մետաղներ պարունակող հումքային ապրանքների՝ Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծման և Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանման կարգի դրույթներին համապատասխան լիազորված մարմնի կողմից
_____
(երկիրը, կազմակերպության անվանումը, պաշտոնը, պետական վերահսկողի անունը, ազգանունը)

պետական վերահսկողությունն իրականացվել է
_____
(պետական վերահսկողության իրականացման վայրը)

ապրանքի
_____,
(ապրանքի անվանումը)

հայտատուի կողմից ներկայացված
_____
(կազմակերպության անվանումը / անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը)

արտահանման համար առ _____N_____ պայմանագրով կամ հաշիվ ապրանքագրով:

Փաստաթուղթ, որը հաստատում է թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի հետ գործողություն իրականացնելու հայտատուի իրավունքը

_____ (փաստաթղթի անվանումը) առ_____№_____

տրամադրված _____
(մարմնի անվանումը)

Պայմանագրին և ուղեկցող փաստաթղթերին համապատասխան ապրանքի զանգվածը կազմում է _____ գրամ.
(նետտո)

Թանկարժեք մետաղների անվանումը և զանգվածը (ոսկերչական և այլ կենցաղային արտադրանքի համար նշվում է զանգվածը՝ միայն հիմնական մետաղի մաքրությամբ՝ համաձայն հարգի)՝
ոսկի մաքրությամբ զանգվածով _____ գրամ,
արծաթ մաքրությամբ զանգվածով _____ գրամ,
պլատին մաքրությամբ զանգվածով _____ գրամ,
պալադիում մաքրությամբ զանգվածով _____ գրամ,
իրիդիում մաքրությամբ զանգվածով _____ գրամ,
ռոդիում մաքրությամբ զանգվածով _____ գրամ,
ռութենիում մաքրությամբ զանգվածով _____ գրամ,
օսմիում մաքրությամբ զանգվածով _____ գրամ:

Թանկարժեք մետաղների բնակտորների տեսքով ոսկերչական արտադրանքի մեջ ներդիրների զանգվածը՝

ոսկյա _____ գրամ, արծաթյա _____ գրամ, պլատինե _____ գրամ:

Թանկարժեք քարերի (ոսկերչական և այլ կենցաղային արտադրանքի համար) անվանումը և զանգվածը՝

մշակված ալմաստներ (ադամանդներ) քաշով _____ կարատ,
զմրուխտներ քաշով _____ կարատ,

սուտակներ քաշով _____ կարատ,
շափյուղաներ քաշով _____ կարատ,
ալեքսանդրիտներ քաշով _____ կարատ,
բնական մարգարիտ քաշով _____ կարատ:

Ապրանքի քանակը _____ հատ
Ապրանքի պայմանագրային արժեքը _____
(պայմանագրով նախատեսված տարադրամով)
Թանկարժեք մետաղներ և թանկարժեք քարեր պարունակող ապրանքների պետական վերահսկողության և արժեքի գնահատման արդյունքները՝ _____
_____
_____
_____

Պետական վերահսկողությունն իրականացվել է հայտատուի ներկայացուցչի ներկայությամբ
_____
(պաշտոնը, անունը, ազգանունը, լիազորագրի համարը)

Ապրանքը կապարակնքված է՝
պետական վերահսկողի համարը _____ կնիքով,
հայտատուի համարը _____ կնիքով:

Պետական վերահսկող _____
(ստորագրությունը)

Հաստատում եմ ներկայացված փաստաթղթերի իսկությունը, պետական վերահսկողության իրականացման նկատմամբ պահանջ չունեմ, ապրանքն ստացված է ամբողջ ծավալով:

Հայտատուի ներկայացուցիչ _____
(ստորագրությունը)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար **Դ. Հարությունյան**

Հավելված N 5

ՀՀ կառավարության 2015 թվականի
նոյեմբերի 5-ի N 1331-Ն որոշման

Ա Կ Տ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐ ԵՎ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՔԱՐԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԺԵՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ

_____ _____ N _____
(ամսաթիվը) (պետական վերահսկողության իրականացման վայրը)

Թանկարժեք մետաղների, թանկարժեք քարերի և թանկարժեք մետաղներ պարունակող հումքային ապրանքների՝ Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծման և Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանման կարգի դրույթներին համապատասխան լիազորված կազմակերպության կողմից

_____
(երկիրը, կազմակերպության անվանումը, պաշտոնը, պետական վերահսկողի անունը, ազգանունը)

պետական վերահսկողությունն իրականացվել է

_____
(պետական վերահսկողության իրականացման վայրը)

ապրանքի

_____,
(ապրանքի անվանումը)

հայտատուի կողմից ներկայացված

_____
(կազմակերպության անվանումը / անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը)

ներմուծման համար առ _____N_____ պայմանագրով կամ հաշիվ ապրանքագրով:

Փաստաթուղթ, որը հաստատում է թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի հետ գործողություն իրականացնելու հայտատուի իրավունքը.

_____ առ_____ N _____
(փաստաթղթի անվանումը)

տրամադրված

_____
(մարմնի անվանումը)

Պայմանագրին և ուղեկցող փաստաթղթերին համապատասխան ապրանքի զանգվածը կազմում է
_____ գրամ:
(նետտո)

Թանկարժեք մետաղների անվանումը և զանգվածը (ոսկերչական և այլ կենցաղային արտադրանքի համար նշվում է միայն հիմնական մետաղի մաքրությամբ)՝

ոսկի մաքրությամբ զանգվածով _____ գրամ,
արծաթ մաքրությամբ զանգվածով _____ գրամ,
պլատին մաքրությամբ զանգվածով _____ գրամ,
պալադիում մաքրությամբ զանգվածով _____ գրամ,
իրիդիում մաքրությամբ զանգվածով _____ գրամ,
ռոդիում մաքրությամբ զանգվածով _____ գրամ,
ռութենիում մաքրությամբ զանգվածով _____ գրամ,
օսմիում մաքրությամբ զանգվածով _____ գրամ:

Թանկարժեք քարերի (ոսկերչական և այլ կենցաղային արտադրանքի համար) անվանումը և քաշը՝

մշակված ալմաստներ (ադամանդներ) քաշով _____ կարատ,
զմրուխտներ քաշով _____ կարատ,
սուտակներ քաշով _____ կարատ,
շափյուղաներ քաշով _____ կարատ,
ալեքսանդրիտներ քաշով _____ կարատ,
բնական մարգարիտ քաշով_____ կարատ:

Ապրանքի քանակը_____ հատ:

Ներմուծվող թանկարժեք մետաղներ և թանկարժեք քարեր պարունակող ապրանքների պետական վերահսկողության արդյունքները՝
_____
_____
_____

Պետական վերահսկողությունն իրականացվել է հայտատուի ներկայացուցչի ներկայությամբ
_____
(պաշտոնը, անունը, ազգանունը լիազորագրի համարը)

և մաքսային մարմնի ներկայացուցչի
_____
_____
(պաշտոնը, անունը, ազգանունը)

Ապրանքը կապարակնքված է՝
պետական վերահսկողի համարը _____կնիքով,
հայտատուի համարը _____կնիքով:

Մաքսային մարմնի ներկայացուցիչ _____ _____ /_____/
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Պետական վերահսկող _____
(ստորագրությունը)

Հաստատում եմ ներկայացված փաստաթղթերի իսկությունը, պետական վերահսկողության իրականացման նկատմամբ պահանջ չունեմ, ապրանքն ստացված է ամբողջ ծավալով:

Հայտատուի ներկայացուցիչ_____
(ստորագրությունը)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար **Դ. Հարությունյան**

Հավելված N 6
ՀՀ կառավարության 2015 թվականի
նոյեմբերի 5-ի N 1331-Ն որոշման

Ա Կ Տ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԱՐՏԱՀԱՆՎՈՂ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԺԵՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ

_____ _____ N_____
(ամսաթիվը) (պետական վերահսկողության իրականացման վայրը)

Թանկարժեք մետաղների, թանկարժեք քարերի և թանկարժեք մետաղներ պարունակող հումքային ապրանքների՝ Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծման և Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանման կարգի դրույթներին համապատասխան լիազորված մարմնի կողմից (նշվում է ԵԱՏՄ անդամ պետությունը)

_____

_____

(կազմակերպության անվանումը, պաշտոնը, անունը, ազգանունը)

պետական վերահսկողությունն իրականացվել է _____

(պետական վերահսկողության իրականացման վայրը)

ապրանքի

_____

_____,

(ապրանքի անվանումը)

հայտատուի կողմից ներկայացված _____

_____

(կազմակերպության անվանումը / անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը)

արտահանման համար առ _____ N _____ պայմանագրով կամ հաշիվ ապրանքագրով:

ԵԱՏՄ անդամ պետության լիցենզիա առ_____ N _____

Փաստաթուղթ, որը հաստատում է թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի հետ գործողություն իրականացնելու հայտատուի իրավունքը

_____առ_____ (փաստաթղթի անվանումը) N_____

Պայմանագրին և ուղեկցող փաստաթղթերին համապատասխան ապրանքների զանգվածը կազմում է _____

Թանկարժեք մետաղների զանգվածը մաքրությամբ _____ գրամ

(բրուտտո, նետտո)

Ապրանքի քանակը _____ հատ

Թանկարժեք մետաղների բնակտորների ընդհանուր զանգվածը _____ գրամ

Պայմանագրային արժեքը, որը հաստատված է արտաքին առևտրի համաձայնագրում
_____
(ԱՄՆ-ի դոլար)

Թանկարժեք մետաղների պետական վերահսկողության իրականացման և արժեքի գնահատման արդյունքները՝
_____
_____
_____
_____
_____

Արտահանվող թանկարժեք մետաղների պետական վերահսկողությունն իրականացվել է հայտատուի ներկայացուցչի ներկայությամբ
_____
_____
(պաշտոնը, անունը, ազգանունը լիազորագրի համարը)

Ապրանքը կապարակնքված է՝
լիազոր մարմնի համարը _____կնիքով,
հայտատուի համարը _____կնիքով:

Լիազոր մարմնի ներկայացուցիչ _____
(ստորագրությունը)

Հաստատում եմ ներկայացված փաստաթղթերի իսկությունը, պետական վերահսկողության իրականացման նկատմամբ պահանջ չունեմ, ապրանքն ստացված է ամբողջ ծավալով:

Հայտատուի ներկայացուցիչ _____
(ստորագրությունը)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար **Դ. Հարությունյան**

Հավելված N 7
ՀՀ կառավարության 2015 թվականի
նոյեմբերի 5-ի N 1331-Ն որոշման

Ց Ա Ն Կ

ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻ ԵՎ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՔԱՐԵՐԻ, ՉՄՇԱԿՎԱԾ ՄԵՏԱՂՆԵՐԻ, ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻ ՋԱՐԴՈՆԻ ԵՎ ԹԱՓՈՆՆԵՐԻ, ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ ՀԱՆՔԱՔԱՐԵՐԻ ԵՎ ԽՏԱՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՀՈՒՄՔԱՅԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ, ՈՐՈՆՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՍԱՀՄԱՆՈՎ ՏԵՂԱՓՈԽԵԼԻՍ ՈՒՆԵՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ

Աղյուսակ N 1

Ապրանքի համառոտ նկարագիրը	ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ի ծածկագիրը
Բնական ալմաստներ – արդյունաբերական, չմշակված կամ պարզապես սղոցված, ճեղքված կամ կոպիտ մշակման ենթարկված՝ բացառությամբ «բորտ» և «դրիլլինգ» ձև ունեցողների՝ անկախ դրանց չափսերի և մշակման աստիճանի -ոչ արդյունաբերական, չմշակված կամ պարզապես սղոցված, ճեղքված կամ կոպիտ մշակման ենթարկված, որոնք կարող են օգտագործվել ադամանդի պատրաստման համար	7102 21 000 0-ից 7102 31 000 0
Չմշակված ոսկի կամ արծաթ* (միայն զտարկված ոսկի և արծաթ՝ ձուլակտորների, թիթեղների, փոշու և հատիկների տեսքով, ինչպես նաև մետաղադրամի դրամահատման համար օգտագործվող ոսկի)	7106 10 000 0 7106 91 000 7108 11 000 0 7108 12 000 7108 20 000
Չմշակված պլատին, պլատինե խմբի* մետաղներ (միայն զտարկված պլատին և պլատինե խմբի մետաղներ՝ ձուլակտորների, թիթեղների, փոշու և հատիկների տեսքով)	7110 11 000 7110 21 000 7110 31 000 0 7110 41 000 0 7110 19 100 0 7110 29 000 0
Չմշակված թանկարժեք մետաղներ (զտարկման ոչ ենթակա բնակտորներ)	7106 7108 7110
Մարգարիտ՝ բնական	7101 10 000 0
Բնական թանկարժեք քարեր՝ չմշակված և մշակված	7103 10 000 0

	7103 91 000 0 7103 99 000 0
Նյութեր՝ հանքային, այլ (միայն եզակի սաթե գոյացություններ)	2530 90 000 0-ից

---

* Բացառությամբ ԵԱՏՄ անդամ պետությունների կենտրոնական (ազգային) բանկերի կողմից արտահանվող թանկարժեք մետաղների

Աղյուսակ N 2

Ապրանքի համառոտ նկարագիրը	ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ի ծածկագիրը
Թանկարժեք մետաղներ՝ ապրանքների և արտադրանքների տեսքով	2843 10 2843 21 000 0 2843 29 000 0 2843 30 000 0 2843 90 7106 10 000 0* 7106 92 000 0* 7108 13 * 7110 19 * 7110 29 000 0* 7110 39 000 0* 7110 49 000 0* 7113 7114 7115 9003 19 000 1 9021 29 000 0** 9113 10 100 0 9608 10 920 0 9608 10 990 0 9608 30 000 0 3006 40 000 0 *** 7107 00 000 0 7109 00 000 0

	7111 00 000 0 8544 *** 9101 *** 9102 *** 9103 *** 9105 *** 9111 *** 9112 *** 6804 21 000 0
Թանկարժեք քարերից արտադրատեխնիկական նշանակության արտադրանք	8205 8207 8522 90 300 0
Բնական ալմաստներ՝ արդյունաբերական, չմշակված կամ պարզապես սղոցված, ճեղքված կամ կոպիտ մշակման ենթարկված՝ բացառությամբ «բորտ» և «դրիլլինգ» ձև ունեցողների՝ անկախ դրանց չափսերի և մշակման աստիճանի, ինչպես նաև ալմաստներ մաղավոր դասի «–3+2» և ավելի ցածր	7102 21 000 0-ից
Ալմաստներ՝ արդյունաբերական, այլ	7102 29 000 0
Փշրանք և փոշի ալմաստից	7105 10 000 0
Ալմաստներ մշակված, բայց չշրջանակված կամ չամրացված՝ ոչ արդյունաբերական, այլ (ադամանդ)	7102 39 000 0
Արտադրանք՝ թանկարժեք քարերից և բնական մարգարիտից	7116 20-ից 7116 10 000 0-ից
Մետաղադրամներ	7118 ***

* Բացառությամբ զտարկված թանկարժեք մետաղներից ձուլակտորների, թիթեղների, փոշու և հատիկների տեսքով, ինչպես նաև չմշակված ձևերի

** Միայն թանկարժեք մետաղներից կամ գրտնակած թանկարժեք մետաղներից

*** Միայն թանկարժեք մետաղներից՝ թանկարժեք քարերից ներդիրներով կամ առանց թանկարժեք քարերից ներդիրների

Աղյուսակ N 3

Ապրանքի համառոտ նկարագիրը	ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ի ծածկագիր

Հանքաքարեր, խտանյութեր և գունավոր մետաղների մոխիր (բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 5-ի N 90-Ն որոշման NN 2 և 6 հավելվածներում ընդգրկված ապրանքների)	2603 00 000 0 2604 00 000 0 2607 00 000 0 2608 00 000 0 2609 00 000 0 2617 2620 19 000 0 2620 21 000 0 2620 29 000 0 2620 30 000 0 2620 99 100 0 2620 99 950 1 2620 99 400 0 2620 99 950 2 2620 91 000 0 2620 99 950 3 2620 99 950 9 2621
Կիսաֆաբրիկատներ՝ գունավոր մետաղների արտադրության	7401 00 000 0 7402 00 000 0 7501 7801 99 100 0
Հանքաքարեր, խտանյութեր՝ թանկարժեք մետաղների	2616
Զարդոն և թափոններ՝ թանկարժեք մետաղների (բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 5-ի N90-Ն որոշման NN 2 և 6 հավելվածներում ընդգրկված ապրանքների)	7112
Չմշակված թանկարժեք մետաղներ (բացառությամբ զտարկված թանկարժեք մետաղների ձուլակտորների, թիթեղների, փոշու և հատիկների տեսքով)	7106 91 000 7108 12 000 9 7110 11 000 9 7110 21 000 9 7110 31 000 0 7110 41 000 0

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար **Դ. Հարությունյան**

Հավելված N 8
ՀՀ կառավարության 2015 թվականի
նոյեմբերի 5-ի N 1331-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԵՐՐՈՐԴ ԵՐԿՐՆԵՐ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ ԵՐՐՈՐԴ ԵՐԿՐՆԵՐԻՑ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻ, ԹԱՆԿԱՐԺԵՔ ՔԱՐԵՐԻ ԵՎ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՀՈՒՄՔԱՅԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԵԼՔԻ ՆՈՐՄԵՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ

1. Սույն կարգի նպատակը Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանման և Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծման թանկարժեք մետաղների, թանկարժեք քարերի և թանկարժեք մետաղներ պարունակող հումքային ապրանքների վերամշակման արտադրանքի ելքի նորմերը սահմանելու գործընթացը կանոնակարգելն է:

2. Սույն կարգով սահմանված հարաբերությունները կարգավորվում են նաև Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի օգոստոսի 16-ի «Ոչ սակագնային կարգավորման ոլորտում նորմատիվ իրավական ակտերի մասին» N 134 որոշման դրույթներին համապատասխան:

3. Սույն կարգը կիրառվում է իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի (այսուհետ՝ հայտատու) կողմից՝ վերամշակում մաքսային տարածքում, վերամշակում ներքին սպառման համար և վերամշակում մաքսային տարածքից դուրս մաքսային ընթացակարգերով ձևակերպված՝ թանկարժեք մետաղների, թանկարժեք քարերի և թանկարժեք մետաղներ պարունակող հումքային ապրանքների վերամշակման արտադրանքի ելքի նորմերը որոշելու նպատակով:

4. Վերամշակման արտադրանքի ելքի նորմերը որոշվում են հետևյալ կարգով՝

1) վերամշակման արտադրանքի ելքի նորմերը որոշելու համար սկզբնական նյութերն են համարվում՝

ա. տեխնիկաիրավական փաստաթղթերը, վերամշակողի և (կամ) հայտատուի կողմից կատարված հաշվարկները, տեխնոլոգիական գործընթացը կարգավորող այլ փաստաթղթերը,

բ. արտադրանքի պատրաստման տեխնոլոգիական գործընթացի նկարագիրը.

- արտադրանքի պատրաստման տեխնոլոգիական գործընթացի նկարագիրը ներկայացվում է արտադրանքի պատրաստման տեխնոլոգիական քարտեզի (սխեմայի) տեսքով, սույն կարգի N 1 ձևին համապատասխան,

- վերամշակման արդյունքում առաջացած թանկարժեք իրերի մնացորդները, որոնք կարող են հավաքվել արտադրությունում և հետագայում օգտագործվել (նախնական մշակմամբ կամ առանց դրա) ապրանքային արտադրանքի արտադրության մեջ, անհատույց կորուստներին չեն դասվում,

- տեխնոլոգիական քարտեզը կազմվում է արտադրանքի յուրաքանչյուր խմբաքանակի համար (մատանիներ, ապարանջաններ, վզնոցներ, կատալիտիկ ցանցեր, աֆինացված մետաղներ և այլն)՝ համաձայն ներմուծվող (արտահանվող) վերամշակվող ապրանքների դասակարգման, որը թանկարժեք իրերի վերամշակման պայմանագրի անբաժանելի մասն է,

- արտադրանքը խմբավորվում է ձուլվածքների հարգով և հետևյալ հատկանիշներով՝ մեկ տեսակի պատկանելությամբ (մատանիներ, ականջօղ և այլն), կառուցվածքի նմանությամբ, պատրաստման տեխնոլոգիայի միասնականությամբ, քաշի մեջ չնչին տարբերությամբ,

գ. վերամշակողի արտադրական բազայի տեխնիկական հատկանիշները.

2) վերամշակման արտադրանքի ելքի նորման որոշվում է որպես վերամշակվող արտադրանքի քանակություն՝ վերամշակման փաստացի պայմաններում թանկարժեք իրերի քանակի մեկ միավորից ստացած՝ բացարձակ կամ հարաբերական (տոկոսային) արժեքով արտահայտված.

վերամշակվող արտադրանքի ելքի նորմայի օգտագործման ժամանակ վերամշակման արդյունքում ստացված վերամշակվող արտադրանքի յուրաքանչյուր քանակությունը հաշվարկվում է թանկարժեք իրերի քանակությունը տվյալ ապրանքի ելքի նորմային բազմապատկման եղանակով.

3) թանկարժեք իրերի կորուստների քանակությունը որոշվում է տեխնոլոգիական գործընթացի և արտադրական հզորությունների առանձնահատկություններից.

թանկարժեք իրերի կորուստները, ապրանքի կոնկրետ խմբերով, որոշվում են որպես տվյալ խմբի արտադրանքի պատրաստման ժամանակ գործառնություններից առաջացած թանկարժեք իրերի կորուստների գումար,

վերամշակման ժամանակ թանկարժեք իրերի կորուստների ընդհանուր նորմերը որոշվում են գրամով՝ որպես արտադրանքի յուրաքանչյուր խմբի կորուստի գումար, իսկ տոկոսով՝ որպես արտադրանքի յուրաքանչյուր խմբի կորուստի գումարի հարաբերություն դրանց պատրաստման համար օգտագործված թանկարժեք իրերի քաշին.

4) վերամշակվող արտադրանքի ելքի նորմայի որոշման ժամանակ կարող են հաշվի առնվել թանկարժեք իրերի մնացորդները և վերամշակման թափոնները՝ պայմանագրի պայմաններին համապատասխան:

5. Վերամշակման նպատակով թանկարժեք քարերի ներմուծման (արտահանման) ժամանակ հայտատուի (վերամշակողի) արտադրության վիճակագրական տվյալների հիման վրա հայտատուն լրացուցիչ կազմում է երեսակված թանկարժեք քարերի պատրաստման կանխատեսում՝ ըստ քաշային խմբերի՝ կախված երեսակման ձևից և թանկարժեք քարերի երեսակման տեխնիկական պայմաններից.

վերամշակվող թանկարժեք քարերի ելքի նորման որոշվում է որպես երեսակված թանկարժեք քարերի քաշի և չմշակված թանկարժեք քարերի քաշի հարաբերակցություն՝ տոկոսով արտահայտված,

վերամշակվող թանկարժեք քարերի ելքի նորման քաշի չափման միավորով արտահայտված (գրամ, կարատ) որոշվում է չմշակված թանկարժեք քարերի քաշը բազմապատկելով վերամշակման արտադրանքի ելքի նորմայի տոկոսի վրա՝ նվազեցված (ավելացված), բայց ոչ ավելի քան 5 տոկոսի չափով (մշակված թանկարժեք քարերի տեսականուց կախված),

թանկարժեք քարերի թափոնների քանակը որոշվում է արտահանվող (ներմուծվող) վերամշակվող թանկարժեք քարերի քաշը բազմապատկելով թափոնների քանակի վիճակագրական գործակցին, որը որոշված է վերամշակման նպատակով արտահանված (ներմուծված) համանման բնութագրերով թանկարժեք քարերի համար:

6. Վերամշակվող արտադրանքի ելքի նորմերը նշվում են սույն կարգով հաստատված N 2 ձևում նշված ցանկում:

7. Հայտատուի կողմից վերամշակվող արտադրանքի ելքի նորմերը լիազոր մարմնի հետ համաձայնեցնելու նպատակով լիազոր մարմին են ներկայացվում հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմում, որտեղ նշվում է հայտատուի անվանումը, պետական գրանցման կամ հաշվառման համարը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն.

2) արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ (ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ) դասակարգչի ծածկագրերին դասվող բնական՝ մշակված կամ չմշակված, բայց չշրջանակված կամ չամրացված ալմաստների առուվաճառքի, ներմուծման, արտահանման, փոխադրման լիցենզիայի պատճենը, եթե ներմուծումը կամ արտահանումն իրականացվում է նշված ծածկագրերով.

3) պայմանագիր և (կամ) հաշիվ ապրանքագրի պատճենները.

4) սեփական արտադրությունում արտադրական բազայի և արտադրվող արտադրանքի ծավալի առկայության մասին տեղեկատվությունը՝ համաձայն սույն կարգի N 3 ձևի.

5) ներմուծվող (արտահանվող) վերամշակվող արտադրանքի անվանացանկը՝ համաձայն սույն կարգի N 2 ձևի և N 4 ձևի՝ երեք օրինակից:

8. Լիազոր մարմնի կողմից երեք աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրվում են հայտատուի կողմից ներկայացված փաստաթղթերը: Ուսումնասիրության արդյունքում լիազոր մարմնի կողմից հաստատվում են NN 2 և 4 ձևերը և առձեռն, գրությամբ կամ էլեկտրոնային եղանակով տրամադրվում են հայտատուին:

9. Եթե հայտատուի կողմից ներկայացված փաստաթղթերը թերի են, ապա հայտատուին առաջարկվում է երկու աշխատանքային օրվա ընթացքում վերացնել փաստաթղթերում առկա թերությունները:

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար **Դ. Հարությունյան**

Ձև N 1

Արտադրանքի պատրաստման տեխնոլոգիական քարտեզը (սխեման)
(արտադրանքի խմբաքանակ)

Թանկարժեք իրերի անվանումը _____

Վերամշակման համար թանկարժեք իրերի կշիռը _____

NN ը/կ	Արտադրանքի արտադրության փուլային նկարագիրը (արտադրանքի խմբերը)	Կորուստները	
		տոկոս	գրամ,

			կարատ
1	2	3	4
Ա. Զուլման աշխատանքներ			
1.	Մոդելային բլոկի պատրաստում		
2.	Մոդելային բլոկների յուղազերծում սպիրտում		
3.	Զուլման կաղապարների պատրաստում		
4.	Մոդելային բլոկների յուղազերծում օճառային լուծույթում		
5.	Մոդելի պարունակության տաքացում		
6.	Կաղապարների պատրաստումը լցոնման		
7.	Կապոցի պատրաստում		
8.	Կաղապարների լցոնում		
9.	Զուլվածքների մաքրում		
	Ընդամենը		
Բ. Դրոշմման աշխատանքներ			
1.	Պրոֆիլի ձուլում		
2.	Գրտնակում		
3.	Դետալների դրոշմում (կտրում, հատում, խծուծում, ծակում, կտրվածքի մակերեսի մաքրում, ճկում, ձգում, սեղմում, կողաձռում և այլն)		
	Ընդամենը		
Գ. Մոնտաժային աշխատանքներ			
1.	Նախապատրաստական աշխատանքներ (թիթեղային նյութից մալուխի կտրում)		
2.	Կաղապարից առանձնացում		
3.	Ճկում		
4.	ֆուգանում		
5.	Փոշիացում		
6.	Կետային եռակցում		
7.	Հարմարեցում		
8.	Ասբեստային թիթեղի վրա դետալների դասավորում		
9.	Պատում հալանյութով		

10.	Զոդում		
11.	Այրում		
	Ընդամենը		
Դ. Ոսկերչական զարդի ողորկում			
	Ընդամենը		
Ե. Ոսկերչական քարերի շրջանակում և ամրացում			
	Ընդամենը		
Զ. Գալվանացման միջոցով մետաղական ծածկույթի դեկորատիվ պաշտպանում			
	Ընդամենը		
Է. Պոլիմերային էմալային ծածկույթով պատում			
	Ընդամենը		
	Ընդամենը՝ խմբում		

Տվյալ տեխնոլոգիական քարտեզը (սխեման) օրինակելի է և կարող է ներառել ցանկացած այլ բաժիններ կամ ենթաբաժիններ՝ կախված արտադրանքի տեխնոլոգիական գործընթացից:

Հավ N 2

Ց Ա Ն Կ

Ներմուծվող (արտահանվող) բնական ալմաստների վերամշակվող արտադրանքի

N N ը/կ	Հայտատու	Պայմանագրի համարը, ամսաթիվը	Ապրանքի անվանումը՝ ըստ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ ծածկագրի	Ապրանքի ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ ծածկագիրը	Ապրանքի չափման միավորը՝ ըստ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ ծածկագրի	Արժեքը(ԱՄՆ-իդոլար)	Քանակը (_____ մինչև _____ սահմանում)			Ապրանքի ձևակերպումն իրականացնող մաքսային մարմինը
							ապրանքային	վերամշակմա	վերամշակմա	

							արտադրանքի	ն մնացորդների	ն կորուստների	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11

Հայտատուի (լիազորված հայտատուի) պաշտոնը

_____ (ստորագրությունը) _____(անունը, ազգանունը)

Հայաստանի Հանրապետության իրավասու անձի պաշտոնը

_____ (ստորագրությունը) _____ (անունը, ազգանունը)

Գլխավոր հաշվապահ_____(ստորագրությունը) _____ (անունը, ազգանունը)

Ներմուծվող և արտահանվող վերամշակվող արտադրանքի ցանկի լրացման կանոններն են՝

1. 2-րդ սյունակում նշվում է հայտատուի անվանումը.
2. 3-րդ սյունակում նշվում է ներմուծվող և արտահանվող վերամշակվող արտադրանքի անվանումը.
3. 4-րդ սյունակում նշվում է պայմանագրի համարը՝ համապատասխան ներմուծվող և արտահանվող վերամշակվող արտադրանքի.
4. 5-րդ սյունակում նշվում է վերամշակվող արտադրանքի տաս նիշանոց ծածկագիրը.
5. 7-րդ սյունակում նշվում է վերամշակվող արտադրանքը չափման միավորով՝ համապատասխան ապրանքային դիրքի (6-րդ սյունակ).
6. 8-րդ սյունակում նշվում է վերամշակվող արտադրանքի արժեքը ԱՄՆ-ի դոլարով.
7. 9-12-րդ սյունակներում նշվում են ապրանքային արտադրանքի քանակը, թափոնները, կորուստները և մնացորդը՝ մեկ չափման միավորով.
8. 13-րդ սյունակում նշվում է մաքսային մարմինը, որն իրականացնում է վերամշակման ապրանքների և մնացորդների ձևակերպումները:

Ձև N 3

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

սեփական արտադրությունում արտադրական բազայի և արտադրվող արտադրանքի ծավալի առկայության մասին

_____կիսամյակ _____տարի

Հայտատուի անվանումը _____

Առկա արտադրական բազան			Սեփական արտադրության արտադրանքը		
արտադրական տարածքները(քառ. մ)	տեխնոլոգիական սարքավորումների ցանկը (սարքավորումների քանակը և տեսակը)	արտադրությունում աշխատող աշխատողների քանակը	արտադրանքի անվանացանկը	արտադրված է հաշվետու ժամանակաշրջանում, սեփական արտադրությունում (կգ*)	դրոշմակնքված են (միայն սեփական արտադրության արտադրանքը)(հատ)

_____

*Եթե հայտատուն իրականացնում է արտադրական գործունեություն կես տարվանից պակաս, ապա այդ դեպքում նշվում է արտադրված արտադրանքը՝ փաստացի աշխատած ժամանակահատվածի համար

Հայտատուի պաշտոնը
(լիազորված հայտատուի)_____ _____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Հավ N 4

Ց Ա Ն Կ

վերամշակման նպատակով ներմուծվող (արտահանվող) թանկարժեք իրերի

NN ը/կ	Հայտատու	Պայմանագրի համարը, ամսաթիվը	Ապրանքի անվանումը՝ ըստ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ ծածկագրի	Ապրանքի ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ ծածկագիրը	Ապրանքի չափման միավորը՝ ըստ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ ծածկագրի	Ապրանքի քանակը(հատ)	Ապրանքի արժեքը(ԱՄՆ-ի դոլար)	Ապրանքի ձևակերպումն իրականացնող մաքսային մարմինը
1	2	3	4	5	6	7	8	9

Հայտատուի (լիազորված հայտատուի) պաշտոնը

Հայաստանի Հանրապետության իրավասու անձի պաշտոնը

_____ (ստորագրությունը) _____(անունը, ազգանունը) _____ (ստորագրությունը) _____ (անունը, ազգանունը)

Գլխավոր հաշվապահ_____(ստորագրությունը) _____ (անունը, ազգանունը)

Վերամշակման նպատակով ներմուծվող (արտահանվող) թանկարժեք իրերի ցանկի լրացման կանոններն են՝

1. 1-8-րդ սյունակները լրացվում են սույն կարգի N 6 ձևում նշված՝ 1-8-րդ սյունակներին համապատասխան.

2. 9-րդ սյունակում նշվում է մաքսային մարմինը, որտեղ իրականացվում են վերամշակման նպատակով ներմուծվող (արտահանվող) թանկարժեք իրերի մաքսային ձևակերպումները:

Հավելված N 9
ՀՀ կառավարության 2015 թվականի
նոյեմբերի 5-ի N 1331-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՄԱՔՍԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ԲՆԱԿԱՆ ԱԼՄԱՍՏՆԵՐԻ ԵՎ ԱԴԱՄԱՆԴՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԵԼՔԻ ՆՈՐՄԵՐԻ ՈՐՈՇՄԱՆ

1. Սույն կարգի նպատակը մաքսային նպատակներով բնական ալմաստների և ադամանդների վերամշակման արտադրանքի ելքի նորմերը սահմանելու գործընթացը կանոնակարգելն է:

2. Սույն կարգով սահմանված հարաբերությունները կարգավորվում են նաև Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի օգոստոսի 16-ի «Ոչ սակագնային կարգավորման ոլորտում նորմատիվ իրավական ակտերի մասին» N 134 որոշման դրույթներին համապատասխան:

3. Սույն կարգը վերաբերում է բացառապես ադամանդներ արտադրող տնտեսավարող սուբյեկտներին՝ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին (այսուհետ՝ հայտատու), որոնք իրավունք ունեն կատարելու բնական ալմաստների երեսակում՝ ադամանդ պատրաստելու նպատակով:

4. Վերամշակման ապրանքների ելքի նորմերը որոշելու նպատակով հայտատուն՝

1) համաձայնեցնում է բնական ալմաստների վերամշակման պայմանագրի կողմի հետ ադամանդի պատրաստման արտադրական գործընթացի տեխնոլոգիական սխեման և ադամանդի պատրաստման տեխնիկական պայմանները (ստանդարտները).

2) կազմում է կանխատեսում (քաշաչափային խմբերով) բնական ալմաստների վերամշակման գործընթացում պատրաստված՝ պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող դասակարգման մեջ նշված տեսականուն համապատասխան.

3) հաշվարկում է վերամշակվող ապրանքների ելքի նորմերը:

5. Ամբողջ անվանացանկին համապատասխան սորտավորված բնական ալմաստների վերամշակվող ապրանքների ելքի նորմերի հաշվարկն իրականացվում է բնական ալմաստների յուրաքանչյուր դիրքի համար, որոնք բնութագրվում են որոշակի դասակարգված հատկանիշների համակցմամբ:

Ամփոփ անվանացանկին համապատասխան սորտավորված բնական ալմաստների վերամշակվող ապրանքների ելքի նորմերի հաշվարկն իրականացվում է բնական ալմաստների ամփոփ դիրքի համար, որոնք բնութագրվում են որոշակի խմբային հատկանիշներով:

6. Բնական ալմաստների վերամշակման ապրանքների ելքի նորմերը որոշվում են հետևյալ կարգով՝

1) վերամշակման ապրանքների ելքի նորմերի համար բազային տվյալներն են համարվում՝

ա. հաշվարկի համար օգտագործվող նորմատիվային փաստաթղթերը,

բ. ադամանդի պատրաստման տեխնոլոգիական գործընթացի նկարագիրը,

գ. օգտագործվող արտադրական հզորությունների ցանկը,

դ. բնական ալմաստների մշակման վերաբերյալ վիճակագրական տվյալները.

2) բնական ալմաստների վերամշակման գործընթացում ստացված ադամանդների պատրաստման կանխատեսման հաշվարկը ներառում է՝

ա. հայտատուի կողմից ներկայացված վիճակագրական տվյալների հիման վրա նվազագույն, առավելագույն և միջին ադամանդի ելքի նորմայի տոկոսի որոշում՝ յուրաքանչյուր տեսակավորման համար:

Ադամանդի ելքի նորմայի տոկոսը որոշվում է որպես ադամանդների (յուրաքանչյուր տեսակավորման համար) քաշի և իրեն համապատասխան բնական ալմաստների քաշի հարաբերություն,

բ. ադամանդի նվազագույն, առավելագույն և միջին քաշի (կարատով) որոշում՝ սույն կարգի 6-րդ կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված վիճակագրական տվյալների հիման վրա.

3) ադամանդի քաշի միջին ցուցանիշի որոշում.

ադամանդի քաշի միջին ցուցանիշը հավասար է տեսակավորված ամբողջ ադամանդների քաշի գումարին.

4) ադամանդի ելքի նորմայի վերջնական տոկոսի միջին ցուցանիշի որոշում.

ադամանդի ելքի նորմայի վերջնական տոկոսի միջին ցուցանիշը հավասար է տեսակավորված ադամանդների ելքի նորմերի բոլոր տոկոսային ցուցանիշների գումարին.

5) տեսակավորված ադամանդների նվազագույն, առավելագույն և միջին քաշի որոշում.

տեսակավորված ադամանդների նվազագույն, առավելագույն և միջին քաշը հավասար է ամբողջ ադամանդների քաշերի համապատասխան ցուցանիշների գումարին, որը հաշվարկված է արտահանվող (ներմուծվող) բնական ալմաստների ամբողջ տեսականու համար.

6) ադամանդի պատրաստման կանխատեսման արդյունքում ստացված ադամանդի քաշի վերջնական միջին ցուցանիշի որոշում.

ադամանդի քաշի վերջնական միջին ցուցանիշը հավասար է ըստ տեսակավորման բաշխված բոլոր ադամանդների քաշերի գումարին.

7) բնական ալմաստների վերամշակման գործընթացում ստացված՝ վերամշակման արտադրանքի (ադամանդների) ելքի նորմայի հաշվարկը ներառում է՝

ա. վերամշակման արտադրանքի ելքի նորմայի տոկոսի միջին ցուցանիշի որոշում.

վերամշակման արտադրանքի ելքի նորմայի տոկոսային միջին արժեքը հաշվարկվում է որպես ադամանդների պատրաստման կանխատեսման արդյունքով ստացված ընդհանուր քաշի և ըստ պայմանագրի վերամշակման նպատակով հայտարարագրված՝ համապատասխան բնական ալմաստների քաշի հարաբերության տոկոս,

բ. ադամանդների ելքի նորմայի քաշի նվազագույն և առավելագույն տոկոսային արժեքի որոշում.

ադամանդների ելքի նորմայի քաշի նվազագույն (առավելագույն) տոկոսային արժեքը հաշվարկվում է որպես վերամշակման արտադրանքի ելքի նորմայի տոկոսային միջին արժեք՝ նվազեցված (ավելացված), բայց ոչ ավելի քան 5 տոկոսով.

8) ադամանդների ելքի նվազագույն քաշի (կարատով) որոշում.

ադամանդների ելքի նվազագույն քաշը (կարատով) հավասար է վերամշակման առավելագույն ընթացակարգերով արտահանվող (ներմուծվող) բնական ալմաստների քաշը բազմապատկած հաշվարկային եղանակով ստացված ելքի նորմայի նվազագույն տոկոսային արժեքին.

9) ադամանդների ելքի մաքսիմալ քաշի (կարատով) որոշում.

ադամանդների ելքի առավելագույն քաշը (կարատով) հավասար է վերամշակման մաքսային ընթացակարգերով արտահանվող (ներմուծվող) բնական ալմաստների քաշը բազմապատկած հաշվարկային եղանակով ստացված ելքի նորմայի առավելագույն տոկոսային արժեքին:

7. Բնական ալմաստների վերամշակման արդյունքում առաջացած թափոնների քանակության հաշվարկը ներառում է՝

1) թափոնների քանակի (տոկոսով) նվազագույն և առավելագույն վիճակագրական գործակցի որոշում.

թափոնների քանակի նվազագույն և առավելագույն վիճակագրական գործակիցը (տոկոսով) որոշվում է հայտատուի արտադրության վիճակագրական տվյալների հիման վրա՝ որպես թափոնների նվազագույն (առավելագույն) քաշի և մշակված բնական ալմաստների քաշի հարաբերություն՝ տոկոսով արտահայտված.

2) բնական ալմաստների թափոնների (կարատով) քանակության որոշում.

բնական ալմաստների թափոնների (կարատով) քանակությունը որոշվում է որպես վերամշակման նպատակով արտահանվող (ներմուծվող) քաշի և թափոնների քանակության վիճակագրական գործակցի արտադրյալ:

8. Ադամանդների քաշի նվազագույն և առավելագույն արժեքի մեծությունը (կարատով) և թափոնների քանակությունը (կարատով) նշվում են ներմուծվող (արտահանվող) բնական ալմաստների վերամշակվող արտադրանքի ցանկում՝ համաձայն N 1 ձևի:

9. Հայտատուի կողմից բնական ալմաստների և ադամանդների վերամշակման արտադրանքի ելքի նորմերը լիազոր մարմնի հետ համաձայնեցնելու նպատակով լիազոր մարմին են ներկայացվում հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմում, որտեղ նշվում է հայտատուի անվանումը, պետական գրանցման կամ հաշվառման համարը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն.

2) արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ (ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ) դասակարգչի ծածկագրերին դասվող բնական՝ մշակված կամ չմշակված, բայց չշրջանակված կամ չամրացված ալմաստների առուվաճառքի, ներմուծման, արտահանման, փոխադրման լիցենզիայի պատճենը, եթե ներմուծումը կամ արտահանումն իրականացվում է նշված ծածկագրերով.

3) վերամշակման և (կամ) առուվաճառքի պայմանագրի պատճենները.

4) հայտատուի արտադրությունում բնական ալմաստների մշակման վիճակագրական տվյալները՝ նախորդ օրացուցային տարվա կտրվածքով.

5) հայտատուի արտադրությունում վերամշակման արտադրանքի ելքի նորմերը.

6) պայմանագրով նախատեսված ըստ քաշաչափային խմբերի ադամանդների պատրաստման կանխատեսման հաշվարկը՝ համաձայն սույն կարգի N 2 ձևի.

7) պայմանագրով նախատեսված վերամշակման արտադրանքի ելքի նորմերի հաշվարկը՝ համաձայն սույն կարգի N 3 ձևի.

8) պայմանագրով նախատեսված բնական ալմաստների օգտագործման վերաբերյալ տեղեկանք՝ համաձայն սույն կարգի N 4 ձևի.

9) բնական ալմաստների վերատեսակավորման դեպքում ներկայացվում է լրացուցիչ տեղեկանք՝ համաձայն սույն կարգի N 5 ձևի.

10) վերամշակման նպատակով ներմուծվող (արտահանվող) բնական ալմաստների ցանկը՝ համաձայն սույն կարգի N 6 ձևի (երեք օրինակից):

10. Եթե հայտատուի կողմից ներկայացված փաստաթղթերը թերի են, ապա հայտատուին առաջարկվում է երկու աշխատանքային օրվա ընթացքում վերացնել փաստաթղթերում առկա թերությունները:

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար **Դ. Հարությունյան**

Ձև N 1

Ց Ա Ն Կ

ներմուծվող (արտահանվող) բնական ալմաստների վերամշակվող արտադրանքի

N N ը/կ	Հայտատու	Պայմանագրի համարը, ամսաթիվը	Ապրանքի անվանումը՝ ըստ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ ծածկագրի	Ապրանքի ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ ծածկագիրը	Ապրանքի չափման միավորը՝ ըստ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ	Ապրանքի արժեքը(ԱՄՆ-ի դոլար)	Քանակը (_____ մինչև _____ սահմանում)	Ապրանքի ձևակերպումն իրականացնող մաքսային մարմինը

					ծածկագրի					
							ապրանքային արտադրանքի	վերամշակման մնացորդների	վերամշակման կորուստների	

Հայտատուի (լիազորված հայտատուի) պաշտոնը

_____ (ստորագրությունը) _____(անունը, ազգանունը)

Հայաստանի Հանրապետության իրավասու անձի պաշտոնը

_____ (ստորագրությունը) _____ (անունը, ազգանունը)

Գլխավոր հաշվապահ_____ (ստորագրությունը) _____ (անունը, ազգանունը)

Ձև N 2

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Հայտատուի ղեկավարի պաշտոնը

_____

(հայտատու)

_____

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

«__» _____ 20 _ թ.

Պայմանագրով նախատեսված՝ ըստ քաշաչափային խմբերի ադամանդների պատրաստման կանխատեսման հաշվարկն
առ _____ N _____

Աղյուսակ N 1

NN	Ալմաստի	Ալմաստի	Ադամանդի	Ադամանդի քաշը	ադամադի քաշի տոկոսն

ը/կ	հումքի բնութագիրը և քաշաչափային խումբը	հումքի քաշը (կարատ)	չափաքաշային խումբը	(կարատ)			ալմաստի հումքի հանդեպ		
				նվազա-գույն	առավելա-գույն	միջին արժեքը	նվազա-գույն	առավելա-գույն	միջին արժեք
1	2	3	4	5	6	7	8	9	10
1			90 - 120 և <						
			60 - 90						
			40 - 60						
			30 - 40						
			25 - 30						
			20 - 25						
			15 - 20						
			10 - 15						
			7 - 10						
			6 - 7						
			5 - 6						
			4 - 5						
			3,4 - 4						
			0,30 - 0,39						
			0,40 - 0,49						
			0,50 - 0,59						
			և այլն						
	Ընդամենը								
2									
	Ընդամենը								

Աղյուսակ N 2

Ընդամենը տեսակավորմամբ առ _____ № _____պայմանագրով

Ադամանդի քաշաչափային խումբը	Ադամանդի քաշը (կարատ)		
	նվազագույն	առավելագույն	միջին արժեքը
1	2	3	4
90 – 120 և <			
60 - 90			
40 - 60			
30 - 40			
25 - 30			
20 - 25			
15 - 20			
10 - 15			
7 - 10			
6 - 7			
5 - 6			
4 - 5			
3,4 - 4			
0,30 - 0,39			
0,40 - 0,49			
0,50 - 0,59			
ИТОГО:			

Հայտատուի տեխնիկական ծառայության ղեկավարի պաշտոնը _____ (ստորագրությունը) _____ (անունը, ազգանունը)

Հավ N 3

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Հայտատուի ղեկավարի պաշտոնը

_____

(հայտատու)

_____

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

«__» _____ 20 _ թ.

Պայմանագրով նախատեսված վերամշակման արտադրանքի ելքի նորմերի հաշվարկն առ _____ 20__ թ. N _____

NN ը/կ	Ալմաստի հումքի քաշը (կարատ)	Ադամանդի քաշը (կարատ)			Վերամշակման արտադրանքի ելքի նորման (տոկոսը)		
		նվազագույն	առավելագույն	միջին արժեքը	նվազագույն	առավելագույն	միջին արժեքը

Թափոնների քանակի հաշվարկն առ_____ 20 թ. N ____ պայմանագրով

Ալմաստի հումքի քաշը (կարատ)	Թափոնների քանակը (կարատ)		Ալմաստի հումքի քաշից թափոնների քանակը, $Կ_{թափ}$ տոկոսը	
	նվազագույն	առավելագույն	նվազագույն	առավելագույն

Թափոնների քանակը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝ $Մ_{թափ} = Մ_{ա/հ} \times Կ_{թափ}$,
որտեղ՝
$Մ_{թափ}$ – թափոնների քաշն է՝ ստացված ալմաստի հումքի վերամշակման ժամանակ՝ կարատով,
$Մ_{ա/հ}$ – ալմաստի հումքի քաշը՝ կարատով,
$Կ_{թափ}$ – թափոնների քանակի վիճակագրական գործակիցը՝ տոկոսով.

Հայտատուի տեխնոլոգիական ծառայության
ղեկավարի պաշտոնի անվանումը _____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Ձև N 4

Հայտատու_____

Տեղեկանք բնական ալմաստների օգտագործման մասին՝
առ_____ N _____պայմանագրի

N N ը/կ	Ալմաստի հումքը՝ ներքին շուկայից գնված									Ալմաստի հումքը, նախկինում վերամշակման և արտահանման համար հայտարարագրված			Ալմաստի հումքը, որն արտահանվում է վերամշակման համար			Ալմաստի հումքի մնացորդը	
	պայմանագիրը		վաճառող ը	տալու ակտը		կոմպլեկտա-վորման ցուցակը		քաշը (կարատ)	հաշվարկա-յին արժեքը(ԱՄՆ-ի դոլար)	քաշը (կարատ)	հաշվարկա-յին արժեքը(ԱՄՆ դոլար)	պայմա-նագրային արժեքը (ԱՄՆ-ի դոլար)	քաշը (կարատ)	հաշվարկա-յին արժեքը(ԱՄՆ-ի դոլար)	պայմա-նագրային արժեքը (ԱՄՆ-ի դոլար)	քաշը (կարատ)	հաշվարկա-յին արժեքը(ԱՄՆ-ի դոլար)
	համար ը	ամսա-թիվը		համար ը	ամսա-թիվը	համար ը	ամսա-թիվը										
	ԸՆԴԱՄԵՆԸ՝ ցուցակներով																
	ԸՆԴԱՄԵՆԸ																

Հայտատուի (լիազորված հայտատուի)
պաշտոնը

_____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Գլխավոր
հաշվապահ_____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Հավ N 5

Հայտատու _____

Տեղեկանք բնական ալմաստների վերատեսակավորման մասին՝
համաձայն վերատեսակավորման մասին պայմանագրի՝ առ _____ N _____

NN ը/կ	Չմշակված բնական ալմաստների	Չմշակված բնական ալմաստների	Ալմաստի հումքը՝ գնված ներքին շուկայից	Այդ թվում՝ ալմաստի հումքը, որը ուղարկված է վերատեսակավորման

	հետ գործարքի հաշվառման համարը և ամսաթիվը	հետ գործարքի ակտի համարը և ամսաթիվը	պայմանագրի համարը	պայմանա-գրի ամսաթիվը	տալու ակտի համարը	ակտի ամսա-թիվը	վաճառողը	քաշը (կարատ)	արժեքը(ԱՄՆ-ի դոլար)	քանակը (հատ)	քաշը (կարատ)	հաշվարկային արժեքը (ԱՄՆ-ի դոլար)
Ընդամենը 20 __թ.-ի համար												
Ընդամենը 20 __թ.-ի համար												
Ընդամենը												
Փաթեթների միացման դեպքում քաշային տարբերությունը (քաշային շեղումների ակտ առ _____ N _____)												
Ուղարկված է վերատեսակավորման համար (ռեեստր առ ____ N, ակտ առ _____ N թանկարժեք իրերի ծանրոցի ընդունման մասին հատկորոշման ապրանքագիր առ _____ N)												
Տեսակավորման ընդունման ժամանակ քաշային տարբերություն (բացման և զննման ակտ _____ N)												
Ընդունված է վերատեսակավորման համար												
Տեխնոլոգիական կորուստներ (խմբաքանակներով թանկարժեք քարերի հետ տեխնոլոգիական գործողություն իրականացնելու առ _____ N)												
Թանկարժեք իրերի վերատեսակավորումից հետո տրամադրման ակտ առ _____ N (կոմպլեկտավորման ցուցակ առ _____ N)												
Կատարված աշխատանքների տրման-ընդունման ակտ առ _____ N												

Հայտատուի (լիազորված հայտատուի)
պաշտոնը

_____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Գլխավոր
հաշվապահ _____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Հավ N 6

ՑԱՆԿ

վերամշակման նպատակով ներմուծվող (արտահանվող) բնական ալմաստների

NN ը/կ	Հայտատու	Պայմանագրի համարը, ամսաթիվը	Ապրանքի անվանումը՝ ըստ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ ծածկագրի	Ապրանքի ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ ծածկագիրը	Ապրանքի չափման միավորը՝ ըստ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ ծածկագրի	Ապրանքի քանակը(հատ)	Ապրանքի արժեքը(ԱՄՆ-ի դոլար)	Ապրանքի ձևակերպումն իրականացնող մաքսային մարմինը

Հայտատուի (լիազորված հայտատուի) պաշտոնը

Հայաստանի Հանրապետության իրավասու անձի պաշտոնը

_____ (ստորագրությունը) _____ (անունը, ազգանունը)

_____ (ստորագրությունը) _____ (անունը, ազգանունը)

Գլխավոր հաշվապահ _____ (ստորագրությունը) _____ (անունը, ազգանունը)